«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION



ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/862

«11» 07 2022թ.

«ՋԻԱՐՋԻ» ՍՊ Ընկերության
տնօրեն՝ պարոն Է.Փոթոյանին
(հասցե՝ ՀՀ ք.Երևան, Աբովյան 23
էլ. փոստ garg.llc@mail.ru)

**Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ**
**Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին**

Հարգելի պարոն Փոթոյան,

Համաձայն 04.03.2022թ. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքված դեղորայք և պատվաստանյութերի գնման թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-8-ԵՊԲՀ» պայմանագրի, Ձեր Ընկերությունը պարտավորվել էր մատակարարել պայմանագրով նախատեսված թվով չորս տեսակի ապրանքներ:

Պայմանագրով սահմանված վերջնաժամկետը լրացել է սույն թվականի ապրիլի 14-ին: Սակայն, Ձեր Ընկերության կողմից մատակարարումը իրականացվել է միայն երեք ապրանքատեսակների /թիվ 8-րդ, 14-րդ, 47-րդ չափաբաժինների/ մասով, իսկ մյուս՝ թիվ 5-րդ չափաբաժնի մասով պատասխանատու ստորաբաժանմանը 06.07.2022թ. գրությամբ տեղեկացվել է ապրանքի մատակարումից հրաժարվելու մասին, որը պայմանավորված է տվյալ ապրանքի մատակարարման հետ կապված ֆորս-մաժորային իրավիճակի հետ:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-8-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի 7-րդ կետով՝ Համալսարանը միակողմանի լուծում է 04.03.2022թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/4-1-8-ԵՊԲՀ» պայմանագիրը թիվ 5-րդ չափաբաժնի մասով:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման»կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

ՌԵԿՏՈՐ Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ